



**Մամլոհաղորդագրություն
15 մայիսի, 2012**

ՏԻՄ խրախուսման դրամաշնորհային ծրագրերի մեկնարկ

Մայիսի 15-ին Վանաձորում կտրվի Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանի Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվելիք ՏԻՄ խրախուսման դրամաշնորհային ծրագրերի մեկնարկը Լոռու և Տավուշի մարզերի 10 գործընկեր համայնքների համար: Դեբեդ, Դսեդ, Ծաթեր, Ալավերդի, Ախթալա, Այգեհովիտ, Գանձաքար, Վանաձոր, Դիլիջան և Կոթի:

Ծրագրին պատասկնե աջակցել գործընկեր համայնքներում համայնքային զարգացմանն ուղղված ՏԻՄ-երի նախաձեռնությունների և ծրագրերի իրականացմանը՝ դրանցում խրախուսելով հասարակական-մասնավոր սերտ համագործակցություն և աջակցություն համայնքի բնակիչների կողմից:

Յուրաքանչյուր ծրագրի համար Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանը կհատկացնի 3.5 մլն ՀՀ դրամ գյուղական, և 6.2 մլն ՀՀ դրամ քաղաքային համայնքների համար, իսկ համայնքի ներդրումը կկազմի առնվազն 40 տոկոս: Նախատեսված է ծրագրերն իրականացնել 2012 թվականի մայիս – դեկտեմբեր ամիսներին:

Դրամաշնորհային ծրագրերը ներառում են համայնքներում մարզամշակութային կյանքի ակտիվացում, արվեստի դպրոցների և մանկապարտեզների պայմանների բարելավում, արտաքին լուսավորության համակարգի կառուցում, բնապահպանական իրավիճակի բարելավում, ջրամատակարարման համակարգի վերանորոգում, համայնքի հասարակական նշանակություն ունեցող վայրերի բարեկարգում, ինչպես նաև համայնքային տարատեսակ միջոցառումների կազմակերպում, որոնցում կներգրավվեն բնակչության տարբեր խմբեր, մասնավորապես երիտասարդներ և կանայք:

Գործընկեր համայնքների և նրանցից յուրաքանչյուրի կողմից իրականացվող ծրագրի կարճ նկարագրությունը կցվում է:

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք դիմել՝

- քաղաքային համայնքների համար՝ Վարուժան Ավանեսյան
Համայնքային ռազմավարության գծով ավագ խորհրդական,
Էլ.փոստ: vavanesyan@counterpart.am, ՀԵՏ. +37410 529034
- գյուղական համայնքների համար՝ Վահան Դանիելյան
Համայնքային ռազմավարության գծով խորհրդական,
Էլ.փոստ: vdanielyan@counterpart.am, ՀԵՏ. +37410 529034

Լոռու մարզ

Ալավերդի համայնք

Նպաստել Ալավերդի քաղաքի Մանահին Մարահարթ թաղամասի երեխաների համար նախադպրոցական կրթության բարեկեցիկ պայմանների ստեղծմանը: ՔԻ-ից ստացած գումարը՝ 6 200 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Ախթալա համայնք

Բարելավել բնակիչներին մատուցվող ծառայությունների որակը, ակտիվացնել մշակութային կյանքը՝ հիմնանորոգելով համայնքի արվեստի դպրոցի/համայնքային կենտրոնի/շենքի առաջին հարկն ու տանիքը: ՔԻ-ից ստացած գումարը՝ 6 200 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Դեբեդ համայնք

Ստեղծել համայնքային նշանակություն ունեցող հանդիսությունների կենտրոն, բարենպաստ պայմաններ համայնքում տեղի ունեցող իրադարձություններն ու միջոցառումները կազմակերպելու համար: ՔԻ-ից ստացած գումարը՝ 3 500 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Դսեղ համայնք

Նպաստել Դսեղ համայնքում մշակույթի, զբոսաշրջության, քաղաքացիական հասարակության զարգացմանը և ներհանրային միջոցառումների պատշաճ անցկացման անհրաժեշտ պայմաններ:

Ծաթեր համայնք

Նպաստել համայնքի բնակիչների գիտակցության բարձրացմանը, սեփական համայնքի շրջակա միջավայրի պահպանության գործում, ինչպես նաև ապահովել համայնքի բնակիչների համար հանգստի և ժամանցի պայմաններ: ՔԻ-ից ստացած գումարը՝ 3 500 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Վանաձոր համայնք

Արտաքին լուսավորության համակարգի կառուցում: ՔԻ-ից ստացած գումարը՝ 6 200 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Տավուշի մարզ

Ալզեհովիտ համայնք

Նպաստել համայնքի զարգացմանը, համայնքի բնակիչների անվտանգության ապահովմանը՝ կառուցելով արտաքին լուսավորության համակարգ: ՔԻ-ից ստացած գումարը՝ 3 500 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Գանձաքար համայնք

Ապահովել գյուղաբնակների անվտանգ երթևեկությունը և բարելավել համայնքի սոցիալ տնտեսական պայմանները լուսավորության համակարգի կառուցման և շահագործման միջոցով: ՔԻ-ից ստացած գումարը՝ 3 500 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Դիլիջան համայնք

Նպաստել նախադպրոցական ոլորտի մատուցվող ծառայությունների որակի և քանակի բարձրացմանը: ՔԻ-ից ստացած գումարը՝ 6 200 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում

Կոթի համայնք

Արտաքին լուսավորության համակարգի կառուցում, սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում: ՔԻ-ից ստացած գումարը՝ 3 500 000 դրամ, համայնքը պարտադիր 40% ներդրում